

## Տ. ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՊԵՏ ԴԻԼԱՆՅԱՆ

Ծնվել է 1945 թ. հուլիսի 3-ին, Լենինականում:

1952—58 թթ. սովորել է տեղի Ղուկաս Ղուկասյանի անվան միջնակարգ դպրոցում:

1959 թ. ընդունվել է հոգևոր ճեմարան և ավարտել 1966 թ.:

1966 թ., ձեռամբ Մայր տաճարի լուսարարապետ գերաշնորհ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ձեռնադրվել է սարկավագ:

1966 թ. պաշտպանել է իր ավարտաճառը՝ «Ոսկան վարդապետ Երևանցի» թեմայով, և ստացել բավարար գնահատական:

1967—70 թթ. ծառայել է խորհրդ.ին բանակում:

1971 թ. վերադարձել է Մայր Աթոռ և աշխատել Վեհարանում որպես քարտուղար:

1972 թ. աշխատանքի է նշանակվել Բաքվի հայոց Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում որպես սարկավագ:

Նույն թվականին, ձեռամբ Տ. Կոմիտաս արքեպս. Տեր-Ստեփանյանի, ձեռնադրվել է կուսակրոն քահանա:

1989 թ. Բաքվում տեղի ունեցած հայահալած դեպքերի կապակցությամբ վերադարձել է Մայր Աթոռ:

1989 թ. նոյեմբերի 14-ին Օշականի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցում, ձեռամբ Տ. Անանիա եպս. Արաբաջյանի և խարտավիլակությամբ Տ. Հուսիկ արքեպս. Սանթուրյանի, ստացել է վարդապետական աստիճան:

Այժմ Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ աշխատանքի է նշանակված Թբիլիսիի Ս. Էջմիածին եկեղեցում: